

**ՏԱՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ
ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Թ.Յու. Ազարյան

ՀՏԴ 376 : 159.9

Խաչապուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հարուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. տարածական կողմնորոշում, սոցիալական հարմարեցում, մտավոր հետամնացություն ունեցող աշակերտներ, ֆիզիկական պատրաստվածություն, աշխատանքային գործունեություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության և դաստիարակության համակարգում հատուկ տեղ են գրավում մտավոր հետամնաց երեխաները: Հանրության պրակտիկայի և տեսության զարգացման ժամանակակից փուլը սերտորեն առնչվում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը և որակի բարձրացմանը, որի հեռահար մպատակը նաև աշխատանքային ուսուցման բարելավումն է: Այս խնդիրներն ի հայտ են գալիս նաև հատուկ (օժանդակ) դպրոցում՝ զարգացնող, վերականգնող խնդիրների հետ համատեղ: Այս ամենն իր հերթին բարձրացնում է մտավոր հետամնացություն ունեցող սովորողների աշխատանքին և ինքնուրույն կյանքին նախապատրաստվելու գործընթացի արդյունավետությունը և որակը:

Հատուկ (օժանդակ) դպրոցում իրականացվող ուսումնական և արտադասարանական աշխատանքների բոլոր ձևերում սովորողների ֆիզիկական և աշխատանքային պատրաստականության մեջ նկատվում են հանձնարարությունների տարածական բաղադրիչների կիրառման և ընկալման դժվարություններ, գործնական տարածական կողմնորոշման հմտությունների անլիարժեքություններ: Այս հիմնախնդիրը հատուկ մանկավարժության և հոգեբանության բնագավառում գրեթե ուսումնասիրված չէ, իսկ իրականացվող աշխատանքները վերաբերում են հիմնականում մտավոր հետամնացություն ունեցող սովորողների տարածական կողմնորոշման առանձնահատկությունների բացահայտմանը ուսումնական գործունեության որոշակի ձևերում՝ մաթեմատիկական կողմնորոշում, կողմնորոշում ֆիզդաստիարակության դասերին, նկարչություն և այլն:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների տարածական կողմնորոշման տարրական հմտությունները, որոնք ընկած են տարածական գործունեության առավել բարդ ձևե-

րի հիմքում, հատուկ ուսումնասիրված չեն: Գիտամեթոդական աշխատանքները, որոնք նվիրված են նշված երեխաների խնդիրներին, նրանց ինքնուրույն կյանքին նախապատրաստվելուն, բավարար չեն: Այդ առումով, մեր կողմից կատարած հետազոտությունը կարևոր է և անհրաժեշտ: Այն պայմանավորված է հետևյալով.

1. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաները դժվարությամբ են կողմնորոշվում միկրո և մակրո տարածության մեջ և հաճախ առանց կողմնակի օգնության գրեթե չեն տեղաշարժվում: Ավելորդ է խոսել նրանց սոցիալ-կենցաղային, աշխատանքային և գործունեության այլ տեսակների մասին:

2. Գրեթե բացակայում են այնպիսի աշխատանքները, որոնք հասցեագրված լինեն ուսուցիչներին, դաստիարակներին և այլ մասնագետներին, ովքեր աշխատում են մտավոր հետամնացություն ունեցող աշակերտների տարածական կողմնորոշման զարգացման ուղղությամբ:

3. այս հիմնախնդրի մշակվածության պակասը դժվարեցնում է նշված երեխաների տարածական կողմնորոշման կարողությունների զարգացմանն ուղղված գործնական աշխատանքների կազմակերպումը:

Հիմնախնդրի կարևորությունն ակնառու է նաև նրանով, որ կողմնորոշման կարողության ձևավորման պայմանները և մեթոդները, որոնք կիրառվում են հանրակրթական դպրոցում, կիրառելի չեն մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատելիս, քանի որ նրանք

իրենց տարածական շարժումները չեն կարող ընկալել այնպես, ինչպես նորմալ զարգացող երեխաները, թեև ուսուցումը պետք է իրականանա այս երեխաների զարգացման պոտենցիալ հնարավորությունների հիման վրա և հատուկ պայմաններում:

Այս առնչությամբ՝ մտավոր հետամնացություն ունեցող կրտսեր դպրոցականների տարածական ճիշտ կողմնորոշման կարողության ձևավորման հատուկ վարժությունների, հանձնարարությունների, խաղերի և պայմանների մշակումը, դրանց արդյունավետության փորձարարական հիմնավորումը համարվում է առավել անհարաժեշտ, ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն: Այն կհանդիսանա մտավոր հետամնացություն ունեցող սովորողների տարածական կողմնորոշման զարգացման հիմք:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների տարածական կողմնորոշման ունակության զարգացումը շատ կարևոր է ինչպես ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում, այնպես էլ առօրյա կյանքում: Հաշվի առնելով այն, որ հատուկ (օժանդակ) դպրոցի շրջանավարտների գերակշիռ մեծամասնությունը չի շարունակում ուսումը, այլ իրականացնում է սոցիալ-կենցաղային աշխատանքներ, ակնհայտ է դառնում, թե սոցիալական ինչպիսի մեծ նշանակություն ունեն այս երեխաների համար տարածական կողմնորոշման ճիշտ ձևավորված կարողություններն ու հմտությունները: Այդ պատճառով առավել բարդ և կարևոր խնդիրներից է համարվում մտավոր հետամ-

նացությունն ունեցող երեխաների՝ տարածական կողմնորոշման կայուն կարողության զարգացումը:

Գործնական տարածական կողմնորոշումը մտավոր հետամնացությունն ունեցող երեխաների ուսուցման գործընթացում ունի էական նշանակություն: Առաջին հերթին դա վերաբերում է աշխատանքի ուսուցմանը, ֆիզիկական դաստիարակությանը, նկարչությանը և այլ առարկաներին, որոնց ծրագրերը ներառում են բավականին ուսումնական նյութ՝ լուծելով տարաբնույթ խնդիրներ: Դրանց լուծումը պահանջում է նշված կարողությունների լիարժեք մշակում: Այդ կարողությունների զարգացման գործընթացն ուղեկցվում է տարբեր տիպի դժվարություններով, որոնց մասին իրենց աշխատություններում նշել են մի շարք հեղինակներ: [3;4;5] Նշելով մտավոր հետամնաց երեխաների գործնական տարածական կողմնորոշման հետաքրքրության բարձրացումը՝ հեղինակներն ընդգծում են, որ այդ պատասխանատու հարցում լուրջ խնդիր է համարվում տարածական տարբերակման կարողության խանգարումը: Դրանցից կարելի է նշել մասնավորապես շրջակա տարածության մեջ երեխաների կողմնորոշման կարողության անբավարար զարգացածությունը: Այդ պատճառով, առաջ է գալիս այս գործընթացի կատարելագործման ուղիների ընտրման, ուսուցման միջոցների և մեթոդների արդյունավետացման անհրաժեշտությունը:

Նշվածը մասնավորապես վերաբերում է այդ հմտությունների և կարողությունների վաղ շտկողական ուսուցման հիմնախնդիրին, քանի

որ այն էականորեն դյուրին կդարձնի բարձր դասարաններում տարածական վերլուծման կարողության բարդ ձևերի յուրացումը և կապահովի մտավոր հետամնաց երեխաների նախապատրաստումը հետագա ինքնուրույն աշխատանքային գործունեությանը:

Տարածության ճանաչման երկրորդ անհրաժեշտ պայմանը, մտավոր հետամնացությունն ունեցող երեխայի կողմից առարկայական գործողությունների առավել վաղ յուրացումն է, ինչը հնարավորություն է ընձեռում տարածական հարաբերությունները կամովի փոխելու և հետագայում նորերը ստեղծելու հնարավորություն:

Նորմալ զարգացող երեխայի համար այս դեպքում լավ միջավայր է հանդիսանում խաղը. երբ մտավոր հետամնացությունն ունեցող երեխաները խաղի ընթացքում ակտիվ չեն, նրանց գործողությունները՝ միատեսակ են:

Հետազոտելով մտավոր հետամնացությունն ունեցող երեխաների տարածական կողմնորոշման նեյրոֆիզիոլոգիան՝ պետք է նշել, որ այս երեխաների տարածական կողմնորոշման կարողության անբավարարությունն ակնհայտ է դառնում շատ վաղ, ոչ պայմանական ռեֆլեկտոր կողմնորոշչային հակազդումներն ավելի թույլ են արտահայտված, և դրանք այդքան էլ կայուն չեն, որքան նորմայում:

Հաշվի առնելով, որ հատուկ գրականության մեջ ընդգծվում է մտավոր հետամնացությունն ունեցող երեխաների անձի, ճանաչողական գործունեության զարգացման ներու-

Ժի անհրաժեշտության մասին, այս խնդիրների լուծման արդյունավետ ուղիների ընտրությունը համարվում է առավել հրատապ ուսուցման, դաստիարակության և ինքնուրույն կյանքին նախապատրաստելու համար:

Այդ ուղիներից մեկը հատուկ (օժանդակ) դպրոցում ուսումնասիրվող ուսումնական առարկաների համակարգն է: Այսպես, մայրենի լեզվի ուսուցման կարևոր խնդիրներից մեկն այդ դպրոցներում համարվում է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների՝ տարածությունը ճանաչելու կարողության զարգացման համար անհրաժեշտ խոսքային հիմքի ստեղծումն է, առարկաների տարածական հարաբերությունների ընկալումը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բանավոր խոսքի զարգացման մակարդակով է պայմանավորված մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման հաջողությունը, այդ թվում՝ գործնական տարածական կողմնորոշումը: Այս երեխաները իրենց ակտիվ բառապաշարում հազվադեպ են կիրառում բառեր և բառակապակցություններ (պատմություններում, բացատրություններում, հարց ու պատասխաններում), որոնք նշանակում են տարածական հասկացություններ:

Մտավոր հետամնացություն ունեցող աշակերտներից առանձնացվում են այնպիսիք, ովքեր ունեն օպտիկական ընկալման և տարածական վերլուծման էական խանգարումներ: Նրանք գրելու գործընթացում դժվարանում են կիրառել տետրի կողմնորոշիչները՝ վանդակները, հորի-

զոնական գծերը: Թղթի վրա դժվար կողմնորոշումը հանգեցնում է նրան, որ տողը տեղափոխվում է անկյունագծի ձևով՝ թղթի վերևի ծախ անկյունից դեպի ներքևի աջ անկյունը:

Նշելով տարածական կողմնորոշման կարևորությունը՝ անհրաժեշտ է ընդգծել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների՝ գրաճանաչության գործընթացին հատուկ նախապատրաստական շրջանի նշանակությունը: Այդ շրջանում անհրաժեշտ են հատուկ վարժություններ, որոնք ապահովում են երեխաների տեսողական կողմնորոշման կարողության և ձեռքերի շարժումների համակարգումը:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաները դանդաղ և մեծ դժվարությամբ են յուրացնում տարածական բնույթի տարբերակված հասկացությունները, ինչպիսիք են «հեռու-մոտիկ», «աջ-ձախ», «վերև-ներքև», «բարձր-ցածր» և այլն: Այդ պատճառով է դժվարացված տարածական մտածողական կողմնորոշումը: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ է այդ կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացնել համապատասխան շտկողական աշխատանքներ:

Մի շարք հետազոտություններում նշվում է ֆիզիկական դաստիարակության դերը շրջակա տարածության մեջ երեխաների կողմնորոշման կարողությունների զարգացման ուղղությամբ: Հեղինակները նշում են, [2;5] որ ֆիզիկական դաստիարակության դասերին հաճախ նկատվում են դժվարություններ, որոնք պայմանավորված են տարածական

կողմնորոշման թերզարգացմամբ, աշակերտների զգալի մասը չի կարողանում կատարել պարզ վարժություններ՝ կողմնորոշվելով ուսուցչի բառային հրահաններով:

Նկարչության դասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մի շարք սխալներ պայմանավորված են առարկաների տարածական հարաբերությունների արտացոլման կարողության խանգարմամբ: Այս երեխաները հաճախ ունենում են մեծ դժվարություններ, որոնք պայմանավորված են թղթի վրա, նկարներում ճիշտ տարածական կարողության ձևավորվածությամբ: Յուրահատուկ են առարկաների գլխավոր և երկրորդական մասերի հաջորդականության ընկալման խանգարումները: Այս դեպքում անհրաժեշտ է մեծ տեղ հատկացնել պատկերվող առարկաների վերլուծությանը, ինչը մեծ նշանակություն ունի թղթի վրա նկարը ճիշտ տեղադրելու հարցում (մեծություն, ձև, չափ):

Այսպիսով՝ մեր կատարված վերլուծությունը վկայում է, որ նկարչությունը ոչ միայն մտավոր հետամնացություն ունեցող երեխաների բազմակողմանի շտկման գործունեության ձև է, այլև նպաստում է տարածական հատկությունների ընդհանրացմանը, դրա ակնառու ձևերի յուրացմանը:

Տարածության գործնական կողմնորոշման հմտությունների զարգացումն ունի մեծ նշանակություն նաև «Տեխնոլոգիա» առարկայի դասերի ժամանակ, քանի որ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների տարածական պատկերացում-

ների զարգացմանը արդյունավետ օգնություն են ցույց տալիս ձեռք բերած աշխատանքային հմտությունները և կարողությունները: Տարածական վերլուծման խանգարումներն էականորեն իջեցնում են այդ աշխատանքի արդյունավետությունը:

Մի շարք հեղինակներ [1;2] նշում են տարածական կողմնորոշման կարողության ձևավորման համար մաթեմատիկայի դասերի կարևորությունը, որի ընթացքում երեխաները սովորում են հաշվել, կատարել չափումներ և այլ: Այդ պատճառով հեղինակներն առաջարկում են մի շարք հետաքրքիր և արդյունավետ խաղեր, վարժություններ, որոնք զարգացնում են տարածական, երկրաչափական պատկերացումները: Դրանց կիրառումը մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ նպաստում է շրջակա միջավայրում առարկաների դիրքի պատկերացման զարգացմանը և ամրապնդմանը:

Այսպիսով՝ տարրական դասարանների մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գործնական տարածական կողմնորոշման զարգացումը հատուկ (օժանդակ) դպրոցի պայմաններում վկայում է տվյալ հիմնախնդրի արդիականության, նրա գործնական նշանակության մասին: Մյուս կողմից, գրականության տվյալների համաձայն, հետազոտողների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է առանձին դասերի ժամանակ մտավոր հետամնացություն ունեցող աշակերտների՝ տարածության մեջ կողմնորոշման միջոցների և մեթոդների մշակմանը, այն դեպքում, երբ մանկավարժներն

ու հոգեբանները մոտակա և սահմանափակ տարածության մեջ գործնական տարածական կողմնորոշմանը գրեթե ուշադրություն չեն դարձրել:

Նկատի ունենալով նշվածը՝ ակնհայտ է դառնում հետազոտվող հի-

մանխնդրի կարևորությունը, տեսական և գործնական մշակվածության անբավարարությունը, ինչը մեր հետագա հետազոտությունների խնդիրն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андрушенко А.В. Развитие пространственного воображения на уроках математики с 1 по 4 классы.- М.:ВЛАДОС 2003.-359 с.

2. Кудрина С.В. Учебная деятельность младших школьников. Материалы для специалиста образовательного учреждения.- Санкт-Петербург.-2004.- 221с.

3. Стадненко Н.М. Особенности мышления учащихся вспомогательной школы. -Киев, 1980.-175с.

4. Тупоногов Б.К. Основы коррекционной педагогики /Учеб. пособие.-М., 2004.-с. 191-364.

5. Шевченко С.Г. Коррекционно-развивающее обучение. Организационно-педагогические аспекты: Метод. Пособие.- М.: 2001.- 136с.

РЕЗЮМЕ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОРИЕНТИРОВКИ В ПРОСТРАНСТВЕ УЧАЩИХСЯ С УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТЬЮ НАЧАЛЬНЫХ КЛАССОВ

Т. Ю. АЗАТЯН

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна, кандидат педагогических наук

Для умственно отсталых детей ориентировка в окружающем пространстве значительно затруднена, так как нарушение психического развития не только ограничивает их двигательную деятельность, но и отрицательно сказывается на развитии пространственных представлений, моторно-двигательной

функции, приводит к снижению компенсаторных процессов. Поэтому проблема коррекции нарушений пространственной ориентировки, а также развитие ориентировочных умений и навыков в условиях специального школьного обучения приобретают исключительное значение.

SUMMARY

THE CONTEMPORARY ISSUES OF SPATIAL ORIENTATION OF PRIMARY SCHOOL CHILDREN WITH MENTAL RETARDATION

T. Yu. Azatyan

*Associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University Candidate of
Pedagogical Sciences*

For mentally retarded children spatial orientation is considerably complicated as disorder of mental development not only limits their motive activity, but also has an adverse effect on development of spatial representations, motor and motive function, leads to decrease

in compensatory processes. Therefore the problem of correction of disorders of spatial orientation, and also development of approximate skills in the conditions of special training in school gain exclusive value.